

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՅԱՐԱՐՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԻՔԱՅԷԼ ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն *)

Քրիստոնէութիւնն էր, որ մահացու հարած տեղ գերութեան սխալէմին—ասում են յաճախ Այդ վկայութիւնը, սակայն, չի համապատասխանում ճշմարտութեան: Մենք արդէն քանիցս շեշտել ենք, որ կրօնական-բարոյագիտական հրահանգները անզօր են փոփոխելու անտեսական էւոլիւցիայի ընթացքը: Քրիստոնէութիւնը, իրաւի, սրաշրպան էր կանգնում մարդկային արժանաւորութեան և բոլոր մարդ-էականքին հաւասար էր հռչակում Աստուծոյ առաջ: Սակայն դրա հետ միասին եկեղեցու հայրերը սկզբունքով ընդունում էին մարդկանց պայմանների անհաւասարութիւնը, յաստկարգային տնարդար յարաբերութիւնները. դրա հետ միասին յայտարարում էին նրանք, որ գերութեան հիմքը սկզբնական մեղքի մէջ է... Երբէք եկեղեցին ճակատ առ ճակատ չի կռւել ստրկութեան դէմ և երբէք սկզբունքով չի պահանջել նրա բարձումը:

Քրիստոնէութիւնը ոչ միայն չըմբարցրեց մարդկանց անհաւասարութիւնը, այլ աւելի ևս խորացրեց այն, ստեղծելով մի այլ ձրիակեր յաստկարգ՝ կղերը: Սկզբներում ինքնավարութիւն էր քրիստոնէական համայնքների մէջ. եպիսկոպոսներն ու երէցները ընտրւում էին համայնքի անդամներից և իրենց իսկ շրջանից: Եկեղեցական կոչւելը, նրանց արդիւնքները աշխատների համար

էին սահմանուում: Բայց երբ հետզհետէ համայնքները աճեցին, հարստացան, այն ժամանակ զործերն էլ բազմացան, և աշխատանքը սկսեց բաժանւել զանազան պաշտօնների մէջ: Այդպիսով ժամանակի ընթացքում առաջացաւ կշերական մի ընդունակ տիպ, մի էական վեղեքի: Հաստատութիւն, որ մինչև օրս էլ փարաբաստարար գոյութիւն ունի: Եկեղեցական կալաւածները ենթարկւած էին եպիսկոպոսների տնօրինութեան, սրանք էին եկամտաւոր բաշխողը: Նրանք հետզհետէ դառնում էին անկախ իրենց ընտրողներից, և վերջիններս՝ ընդհակառակը՝ միշտ աւելի կախւած նրանցից:

Այդ էությունիայի հետ զուգընթացաբար առաջ էր ընթանում բաժան-բաժան համայնքների ծովումը ի մի ընդհանուր քրիստոնէական եկեղեցի: Արդէն 2-րդ դարից սկսած՝ քրիստոնէական զանազան եկեղեցիները Արեւելքում պարսկական էին ուղարկւում, կոնգրէսներ էին կազմում: Վերջապէս ամբողջ հռովմէական կայսրութեան մէջ գործող եկեղեցիները միացան, կազմեցին մէկ ամբողջութիւն և 4-րդ դարում (325 թ.) գումարեց համայն իշխանութեան սինոդը Նիկիայում¹:

Այդ սինոդներում եպիսկոպոսների մէջ գերակշիռ ազդեցութիւն նա էր ունենում, ով ներկայացնում էր ամենահարուստ, հեղեակէս և ամենաուժեղ համայնքը: Այդպիսով Հռովմի եպիսկոպոսը բարձրացաւ դարձաւ գլուխ Արեւմտեան քրիստոնէութեան:

Եկեղեցուն ստատում էր դեռ յետագայում հսկայական մի կաբիէր. նա դառնում էր հետզհետէ սոցիալական մեծ գործօն, աւելի հզօր, քան թէ փթող քաղաքական իշխանութիւնը: 4-րդ դարի սկզբում Կոնստանդին կայսրի օրով քրիստոնէութիւնը դարձաւ պաշտօնական, պիտապետող կրօն հռովմէական կայսրութեան մէջ: Քրիստոնէութիւնը մտաւ պետական հովանաւորութեան ներքոյ. եկամտաւոր նոր աղբիւրներ հաստատուեցին, տասանորոշ սահմանւեց բռնի, պետական հարկադրութեամբ: Եւ շնորհիւ այդ հովանաւորութեան՝ կղերը դարձաւ միշտ աւելի անկախ ժողովրդից. կղեր և ժողովուրդ աւելի և աւելի զարուեցին իրարից: Նրա հա-

¹ Որին մասնակից էր, ինչպէս լատինի է, Նան Հալաստանեայ եկեղեցու պարսկական՝ Կոնստանդին, Էստաւորի որդի:

բընաբուծիչները աճեցին, բազմացան: Աշխարհների բաժինը միշտ աւելի նւազեց. կղերը շարձաւ հարստահարութեան մի հրէշային մեքենայ: Գեռ 5-րդ դարու հոռովմէական եկեղեցու եկամուտը բաժանում էր շորս մասի. մէկ մասը պատկանում էր եպիսկոպոսին, միւսը՝ արքիին կղերական պաշտօնեաներին, երրորդ մասը՝ հաւատոյ պաշտամանց պէտքերին, և միայն մէկ մասը՝ աշխարհիկին: Ուրեմն այդ վերջինները միասին ստանում էին այնքան, որքան եպիսկոպոսը՝ մենակ! ¹

*
* *

Գերմանների յաշխական արշաւանքով մի նոր դարազուլս է բացւում քաղաքակրթութեան զարգացման մէջ: Սկիզբ է դրւում սոցիալական նոր յարաբերութիւնների: Մարդկային հասարակութիւնը մի քաջ և սանում է յառաջդիմութեան ճանապարհի վրայ: Որքան աւելի ենք առաջանում, այնքան աւելի է ապահովւում աշխատաւոր ընդհանրութեան վիճակը, այնքան աւելի է շահւում թոյլի, ստորադրեալի ազատութիւնը: Ազատութեան էությունը ընթանում է սպանիչ դանդաղկոյութեամբ, բայց հաստատուն քայլերով:

Ամբողջ միջնադարեան էպոխան, սկսած Հռովմի անկման ժամանակներից (5-րդ դարից) մինչև 17—18-րդ դարը ընդունւում է ծորտութեան տիրապետութեամբ: Ճորտութիւն, աւադականութիւն կամ ֆէոդալիզմ՝ միևնոյն տնտեսական սիստէմի արտայայտիչ անուններն են: Ֆէոդալական ռէժիմի ծագումը տակաւին պարզւած չէ. և նրա տիրապետութիւնը միակերպ չէր ամբողջ Եւրոպայում: Չենք կարող ի հարկէ, մտնել այն մատրամանութիւնների մէջ, որ այդ ռէժիմը ներկայացնում էր այլ և այլ երկիրներում և կը բաւականանաք նրա ընդհանուր, բնորոշ գծերը ի տես շնեւոյ:

Գերման բարբարոսները հաստատելով իրեն իշխող տարր հոռովմէական մեծածաւալ կաշտութեան մէջ, կամաց-կամաց իւրացրին հոռովմէական քաղաքակրթութիւնը, սովորեցին երկրագործութիւն, արհեստներ, ընտելացան նստակեաց աշխատանքին: Մինչ այն՝ ասորական կենք էին վարում նրանք, պարսկերով գլխա-

¹ Geschichte des Sozialismus. Kautsky etc.

ւորապէս իւշնարածութեամբ: Էապէս պատերազմիկ էր գերման-
ների հասարակութիւնը: Նրանք կազմում էին կռուիների (guerrier,
մարտիկ) ազգայ, կամուր ընկերակցութիւններ՝ մէկ ընդհանուր
առաջնորդի հրամանադրութեան տակ. վերջինս առաջնորդում
էր նրանց որսի ու պատերազմի ժամանակ: Ոմանց ասելով՝ այդ նախ-
նական ընկերակցութեան մէջն է հէնց Ֆէօդալական երարկսիայի
սկզբնաւորութիւնը: Նւաճելով նորանոր հողեր, այդ առաջնորդ-
ները բաժանում էին իրենց ընկերակիցների մէջ: Սրանցից իւրա-
քանչիւրը հաստատելով իբրեւ բացարձակ տէր իր առաջնորդից
պարզեապարհ հողաբաժնի վրայ՝ պարտաւորւում էր 1-ին մաս-
նակցել զինւորական ծառայութեան, 2-րդ վճարել իր իշխանաւո-
րին (առաջնորդին) որոշ տուրք, լինի փողով թէ բնական բերքե-
րով: Երբեմն ազատ դաշինքով միացած՝ զինւոր-հրամանաւարն ու
իր ընկերակիցը դառնում էին այդպիսով տէր և հպատակ, Ֆէօդալ
և ժողով (վասալ): Սակայն ասած է գալիս մի ուրիշ աւելի դառն
հպարակութիւն. երբեմն ազատ՝ գերման ժողովրդի մի սպառ մասը
ենթարկւում է այժմ ճորտերի ու ճորտաւերերի լծին, և ժամա-
նակի ընթացքում կորցնելով զինւորական ընդունակութիւնները,
դառնում է ստրուկ (serf) և բռնի կերպով կապւում է հողին:
Այդպիսի կարարւում է, ըստ երևոյթին, մի ընդհանուր, յեղափոխա-
յի շարժում ազատութիւնից դէպի ստրկութիւն: Բայց դա նման է
այն շարժման, որ տեղի էր ունենում կենսական կարգերի քայ-
քայման միջոցին և որ մենք արձանագրել ենք արդէն իբրեւ—ընդ-
հանուր քաղաքակրթութեան տեսակետից—սլոգգիստի և ոչ ընդհանուր
նշան: Զրպէտքէ անդիմադրելի միւս կողմից, որ այդ միևնույն գերման
ժողովրդի մոտ քան Եւրոպայում միանգամայն թարմութիւն ներշն-
չեց հին աշխարհի փթած, կազմալուծւող օրգանիզմին և մշեց
դէպի առողջ ու նորմալ քաղաքակրթութիւն: Զպէտքէ մոռանալ,
որ հին աշխարհի բանւոր ընդհանրութիւնը ևս այնուհետեւ մի
փոքր ազատ շունչ քաշեց Ֆէօդալիզմի հաստատութեամբ:

Միջին դարերում ազգաբնակչութեան ահագին մասսան, աշ-
խատաւոր մեծամասնութիւնը, կազմում էին ստրուկները¹: Այդ

¹ Ստրուկ—serf (servage—ստրկութիւն) գերի—esclave (esclavage—
գերութիւն): Մեր լեզուն չաճախ չփոխում է այդ երկու հասկացողութիւնները:

մասան էր, որ իր աշխատանքով գոհացնում էր ամբողջ միջնադարեան հասարակութեան նիւթական կարիքները: Ատրկութիւնը նախնական գերութեան շարունակութիւնն է, նրա փոքր ինչ մեղմացած ձևը: Երկու շրջութիւնների միջև զգալի տարբերութիւն կայ: Միջին դարերի ստրուկը, իրաւէ, դարձեալ զուրկ էր հողային սեփականութիւնից և քաղաքացիական իրաւունքներից, ծանրաբեռնուած ամեն փեսակ տուրքերով և յաճախ ենթակայ հողատէր ֆէօդալների կախալակնութիւններին, այնուամենանիւ նա ունէր, այսպէս ասած, իրաւաբանական անձնաւորութիւն, որով և տարբերուում էր վաղեմի գերիից: Նա ունէր իր ընտանիքը, ծանալում էր իր ծնողներին ու զաւակներին, ամուսնանում էր առանց տիրոջ համաձայնութեան, յաճախ պահպանում էր ցմա՜հ իր հողաբաժինը և թողնում էր իր զաւակներին ժառանգութիւն: Նա այլ ևս չէր վաճառուում որպէս մի անշունչ, իր, ընդհակառակը՝ շատ անգամ ստրուկները կարողանում էին գնել իրենց ազատութիւնը, մանաւանդ սկսած 12-րդ դարից, երբ դրամը մուտ գործեց տնտեսական կեանքի մէջ:

Ստրուկները ապրում էին սովորաբար իրար վրայ թափած խոճիթներում, տիրոջ կամ ֆէօդալի տան շուրջը և կազմում էին այդպիսով գիւղեր: Ֆէօդալի տունը ներկայացնում էր մի գլխակ շրջապատւած այգիներով: Նթէ գիւղական ազգաբնակչութիւնը աճում էր չափից դուրս, անհամապատասխան ապրուստի միջոցներին, վրայ էր հասնում Մալթուսի անողոք օրէնքը, (որ այնքան դժուար էր վաղեմի ժամանակներում, երբ աշխատանքի նահապետական գործիքները շեռ շատ քիչ էին արտադրում), գալիս էր սովը կամ համաճարակը և հաւասարակշռութիւն էր հաստատուում ապրուստի ու ազգաբնակչութեան միջև:

Ազնւական էր ֆէօդալների հասարակութիւնը և այդ ազնւականութիւնը հողատիրական էր ու զինւորական: Իբրեւ արդիւնազործութիւն՝ երկրագործութիւնն էր տիրապետողը. առևտուրն ու ինդուստրիան աննշան էին¹: Հողը ամեն բան էր: Նա միևնոյն շերտ

¹ Դրամը շատ սակաւ էր շրջանառութեան մէջ, տնտեսութիւնը քնկարէր էր (Naturalwirtschaft).

էր խաղում, ինչ որ դրամը կսպիրալիստական հասարակութեան մէջ: Նա մի միջոց էր մասնաւոր ծառայութիւնների փոխանակութեան: Հոյը ոչ միայն հարստութեան աղբիւր էր, այլ և տիրապետութեան մի գերազանց գէնք: Նրա միջոցով կարելի էր իշխանութիւն ձեռք բերել ժողովրդային մասսայի վրայ:

Ամեն մի Ֆէօդալ իր փոքրիկ աշխարհում միահեծան պետ էր: Թագաւորը միջին դարերում յաճախ ամենահարուստ Ֆէօդալն էր: Նա կուռնում էր գերիշխան: Եթէ աղքատ է նա՝ զուրկ է ազդեցութիւնից: Աւելի թույլ Ֆէօդալները մտնում էին աւելի ուժեղների հովանաւորութեան տակ, և այդպէս ժամանակի ընթացքում ուժի ու կարողութեան համեմատ դոյանում է Ֆէօդալների դասակարգի մէջ որոշ աստիճանաւորութիւն (կոմս, դուքս և այլն):

Թագաւորի գերիշխանութիւնը մերթ իրական էր, մերթ անւանական: Երական՝ երբ հպարտ Ֆէօդալների ոյժը ջլատւած էր լինում փոխադարձ մրցակցութեան ու պայքարի մէջ և երբ ինքը թագաւորը բաւականաչափ ոյժ էր ունենում նրանց սանձահարելու: Մեւանական էր նա՝ սրանց հակառակ պայմանների մէջ: Բայց առհասարակ թագաւորը չէր հոգում իր երկրի ժողովրդի մասին. (հոգացողութիւնը չբաշխւեց է անպատճառ հասկանալ դրական մտքով), նրա իշխանութիւնը տարածւում էր գրեթէ միայն Ֆէօդալների վրայ: Իսկ այդ վերջինները գինւորական ծառայութիւնից և որոշ տուրքից զաւթ ու բիշ պարտաւորութիւններ չունէին դէպի գերիշխանը: Նրանցից ամեն մէկը իր հողի վրայ թէ թագաւոր էր, թէ կառավարիչ. ամեն մէկը կենտրոնացնում էր իր մէջ թէ օրէնսդիր ու գործադիր և թէ դատաւարական իշխանութիւնները: Ֆէօդալը ունէր իր սեփական զօրքը և նա ինքնուրոյն ու անկախ շահագործում էր սրբուկ մասսաների աշխատանքը: Հոյը օրէնքով նրան էր պարկաշուում և տրւում էր գիւղական համայնքներին: Միջին դարերում տեղ-տեղ գոյութիւն ունէր նաև ազատ գիւղացիութիւն. ճորտութիւնը բացարձակապէս չէր իշխում համայն արևմտեան Եւրոպայի վրայ, ինչպէս որ գերութեան տիրապետութիւնը ևս հնաշարեան էպոխայում բացարձակ չէր:

Միջնադարեան արդիւնազործութիւնը (երկրագործութիւն արհեստ) կղզիացած էր առանձին համայնքների մէջ: Ամեն մի հա-

մայնք իր համար գոյութիւն ունէր, առանց յարաբերութիւնների՝ արտաքին աշխարհի հետ: Այդ համայնքները կամ գիւշեր էին կամ քաղաքներ: Վերջիններս հետզհետէ աճում էին, արհեստի ու առևտրի զարգացման շնորհիւ: Միջնադարեան արհեստը սահմանափակւած էր այսպէս կոչւած՝ համքարական կարգերով (Zunftverfassung): Անհատին ձեռնարկէր այդ անասլահով ժամանակներում՝ կղզիացած մնալ. արհեստաւորները միանում էին ու կազմում ընկերակցութիւններ: Երդման արարողութիւնը միացնում էր նրանց: Թաղաւորից կամ քաղաքային վարչութիւնից տրւում էին իրաւունք մշելու արհեստագործութեան այս կամ այն ճիւղը: Երեք աստիճաններ կալին արհեստաւոր դասի մէջ՝ վարպետ, քարզահ և աշկերպ: Համքարական կազմակերպութեան կանոնադրութիւնը սահմանում էր ծառայութեան փետրութիւնը, աշկերպութեան ժամանակամիջոցը, աշկերպների ընդունելութեան գինը և այլն:

Համքարական կազմակերպութիւնը շահագործման մի ուրիշ մեքենայ էր. աշկերպը ապրում էր վարպետի փնում: Բոճիկ չկայ: Որքան կարելի է՝ երկարացնում էին նրա ծառայութեան ժամանակամիջոցը: Վարպետներն զեղծումները աշակերպների վերաբերմամբ անհաշիւ են: Աշակերպ դառնալու համար քաղմաթիւ խռընդոյների պէտք էր յաշթել. այդտեղ ի նկատի էլ առնւում կրօնը, ծագումը, օրինաւոր կամ ապօրինի ծնունդ լինելը և այլն: Որոշ թիւ ցարիներ ձրի աշխատելուց յետոյ՝ աշակերպը դառնում է քարզահ. այնուհետեւ միայն նա վաճելում է որոշ արտօնութիւններ, ստանում է ոսծիկ, հարկ չէ վճարում, վարպետը աւելի յարգանքով է վերաբերւում նրան: Սակայն քարզահը ևս շահագործման առարկայ էր դեռ:

Արհեստի արդիւնագործութիւնը համայնքներում մենաշնորհ էր փոքրաթիւ վարպետների ձեռքում: Այդ հանգամանքից փուժում էր ի հարկէ սպառող ժողովուրդը: Ազատ մրցում չկար. արդիւնագործութեան առաջադիմութիւնը կաշկանդւած էր:

Միջին դարերում արհեստաւոր բանւորների մէջ չկար ի հարկէ ժողովների, գումարման ազատութիւն. տիրող օրէնսդրութիւնը խստիւ արգելում էր այդ յաճախ խուլ, երբեմն էլ քաղաքձակ կուռլ: Միջնադարեան շրջանում բանւորական խռովութիւնները, գործա-

դուռները անպակաս էին: Սակայն՝ բնորոշ Ֆակո. միջին շարերում
 Ժեյ բանւորները կազմակերպում էին գաղտնի ընկերութիւններ,
 շաւաղութիւններ, երբեմն նոյն իսկ մասսային ապստամբութիւն-
 ներ իրենց հարստահարիչների դէմ՝ դա ոչ թէ փրոշ կարգերը
 չեղաշրջելու համար էր, այլ միայն վարձագիրը աւելացնելու կամ
 աշխատանքի ժամանակամիջոցը պակսեցնելու և այլն: Երբէք այդ
 բանւորական շարժումների մէջ հասարակական կարգերի հիմնական
 յեղաշրջման խնդիր չէր դրւում, և այդ է, որ հապէս զանազա-
 նում է այն ժամանակաց և այժմեան բանւորական շարժումները:

*
* *

Պարտիկուլյարիզմը (բաժան-բաժան լինելը) միջին շարերի
 յատկանիշն է: Չկար քաղաքական մի կենտրոնական իշխանութիւն.
 փրոշում էր Ֆէօդալական ռէժիմին յատուկ ապակենտրոնացումը:
 Չկար անդամ մի ընդհանուր, ազգային լեզու, որ շաղկապէր ցիր
 ու ցան համայնքներին: Տիրապետում էին բարբառները:

Միակ հզօր ու ազդեցիկ՝ կազմակերպութիւնը միջնաշարեան
 այդ պարտիկուլյարիզմի մէջ՝ տիեզերական կաթոլիկ եկեղեցին էր
 իր համաշխարհային լատին լեզուով և իր համադարած հոլային սե-
 փականութեամբ: Նա միակ շաղկապող օղակն էր կղզիացած, բա-
 ժան-բաժան համայնքների, եկեղեցին՝ ասփոճանաբար բարձրանալով,
 հարստանալով՝ կանգնում է Ֆէօդալական հասարակութեան դէմ
 չանդիման, հպարտ, վեհապանծ, իբրև համայն քրիստոնեայ աշ-
 խարհը միացնող գործօն, և իբրև ժողովուրդների ընդհանուր դաս-
 տիարակ: Եւ որպէս հզօր հոգևոր մի իշխանութիւն՝ նա հաւակ-
 նում է շեկավարել նաև աշխարհիկ պետութիւնների ճակատագիրը:
 Յիշեցէք միայն խաչակրաց արշաւանքները, կրօնական և աշխար-
 հիկ իշխանութիւնների կառաջի մրցումը, որ իր զագաթնակէտին
 հասաւ պապ Գրիգոր VII Հիլդեբրանդի օրով: Պերագանցապէս կազ-
 մակերպւած մի պետութիւն էր եկեղեցին իր գերագոյն պետն ու-
 նենալով յանձին պապին: Ամբողջ արեմտեան աշխարհում նա զգալ
 էր տալիս իր ազդեցութիւնը, և ինքն իրան բացարձակ թշնա-
 մի էր յայտարարում Ֆէօդալական իշխանութիւններին: Նա որո-
 ւում էր Ֆէօդալական կամայականութիւնների և փրոշ անիշխա-

նութեան շէնքի մէջ: Միեւնոյն ժամանակ կատարուի էր մեծ բողոքաւոր-
կան պաշտօն, հովանաւորութիւն ու ապաստան տալով թուրքին,
հալածուածներին՝ անկողնցին մի հակալական օճախ էր կազմակեր-
պած անկողնացիներով ու հիւանդանոցներով ուր ապաստանում
ու կերակուում էր մուսաղիկ պրոկուրարիայը, Ֆէօշալական ճան-
կերից ազատուած անտուն, թափառական բազմութիւնը:

Յակոբն կաթողիկէ կղերը իր համապիսիս կալածներով ինքը
կստարէն բռնւած էր, այսպէս ասած, Ֆէօշալական կազմակերպու-
թեան ցանցի մէջ: Նա ներկայացնում էր կղերական ազնւականութիւնը՝
համապատասխան Ֆէօշալական աշխարհիկ ազնւականութեանը: Այդ-
իսկ պարծառով նա պիտի կործանւէր ժամանակի ընթացքում...

Ֆէօշալիզմի լուծը գնալով՝ աւելի ու աւելի ծանրանում էր
շուրջ մարդկանց և մանաւանդ սպորին շատակարգերի վրայ: Ֆէօ-
շալիզմը երբեք չ'եղաւ խաշաշ, օրինաւոր մի հասարակութիւն:
Միշտ իրար շէնք լարած՝ Ֆէօշալները ոչնչացնում էին իրար
Բռնի ոյժը խեղդում էր մարտորդ-կուրորական զօրծունէութիւնը
և ծնում էր ամենուրեք անիշխանութիւն ու խռովութիւններ...

Այն ինչ՝ անորոշական էությունիցիան չամբաքաջ ու հասարակու-
յան զծում էր իր ճակատագրական ուղին, նախապարաստելով Ֆէօշա-
լական վիթխարի աճի մի փոքր փոքր միջոցով: Ներկայորոշութեան ու ար-
հեստի հետ միասին կամաց-կամաց սկսեց զարգանալ փաճառականու-
թիւնը: Խաշաշից արշաւանքները, լաշանի է, որ մեծ զարկ տու-
նաւորին: Արեւմուտքի և արեւելքի միջև սկսեց կենդանի հաղոր-
շակցութիւն: Պոլսից, Սփիւքից և Արեւելքի ուրիշ ծառերից
սկսեցին փոխադրել հում բերքերը շէնքի Եւրոպա. այդպէս մենք
տեսնում ենք, որ 12-րդ դարում մեղաքսազօրութիւնը մուտք է
գործում: արդէն հարաւային Եւրոպայի հաւաքըն էր մանուֆակ-
տուրային ձեռագործ արդիւնաբերութեան: Վաճառականական կա-
պիտալիստիկական էր մեծ յեղաշրջում կատարել 14-րդ, 15-րդ
և 16-րդ դարերում: Նա նոր կեանք բերեց Ֆէօշալական կաշկանդոշ
մարդկերի մէջ: Նա ծնունդ տուեց համաշխարհային առևտրին, երկան
կան միջազգային շուկաներ: Բնական անտէնութիւնը (Naturalwirtse-
chaft) հետզհետեւ վերածւեց փողային անտէնութեան (Geldwirtschaft):
Տնտեսական զարգացման սլացքը արագանում է: Վաճառականը
մի տեսչային եռանդ է ծաւալում: Նա որոշ մարդով կոսմոպոլիտ է

(համաշխարհաքաղաքացի)։ Նրա առջև բաց է ամբողջ աշխարհը։ Նա զնում է, հեռաւոր, անկայտ երկիրներ է թափանցում, շառնում է շրջից նորանոր զիւրերի։ Որքան նշանակալից էին առևտրի ու արդիւնադրժութեան համար 15, 16-րդ դարերի ուրիշերական անցքերը՝ Սմերիկայի գիւտը, Հնդկաստան տանող ծովային ճանապարհի բացւիլը և այլն և այլն։ Դա կապիտալիզմի նշանաւոր էրան էր, որ նախապարտասպանում էր։ Նա ընդլրժուազին է, որ ձնունդ է առնում ու կամաց կամաց կերպարանաւորում, այն բուրժուազիան՝ որին պարտական ենք նորագոյն ժամանակների արտադրանք ու քաղաքական աշխարհում կատարւած վիթխարի թափերը։

Միջազգային շուկայի բացման հետևանքով է պենդային մըրցում փարբեր ազդութիւնների պատկանող վաճառականութիւնների մէջ։ Եւ յաշթանակը տանում են բնականաբար այն ազգերի ներկայացուցիչները, որոնք ունին աւելի մեծ զօրք ու հզօր քաղաքական կազմակերպութիւն։ Ուստի և բոլոր երկիրներում, գլխաւորապէս քաղաքային ազգաբնակչութեան մէջ առաջանում է մի ուժեղ հոսանք՝ ոչնչացնելու Ֆէօդալիզմի ջլապող կապանքները և կենդրոնացնելու իշխանութիւնը։ Բոլոր երկիրներում վաճառականութիւնը գիտակցում է Ֆէօդալական պարտիկուլարիզմի ծանր փնասները և ձգտում է միանալ, ամբողջանալ, միենոյն երկրի բազմաթիւ վաճառականութիւնների փոխարէն ստեղծել մէկ ամբողջական, ազգային ընդլրժուազիա, և ընդհանուր ուժերով շահագործել համաշխարհային շուկան։ Ազգայնական զգացումը, որ գրեթէ բացակայում էր միջին դարերում՝ զգալի կերպով աճում է վաճառականութեան զարգացման հետ։ Որքան ուժեղ է վաճառականի հայրենիքը, այնքան աւելի հովանաւորւած ու ասպնով են նրա շահերը միջազգային շուկայում, այնքան հաւանական է նրա յաշթութիւնը մրցութեան մէջ։ Զիշտ միևնոյն երկրից՝ այսօր Նահերի անտագոնիզմը (հակառակութիւնը) համաշխարհային վաճառանոցում դառնում է ազգայնական անտագոնիզմ։ Առևտրական մրցումը հարկադրում է բոլոր ազգերին (Անգլիա, Ամերիկա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) ամուր կազմակերպել ներքսում, և բարձր պահել ազգային դրօշը։

Այն ժամանակներում ևս պատերազմները անպակաս էին, ինչ-

պէս ներկայումս Եւ ամեն մի պատերազմ, որ մշոււմ էր յանուն առեւտրական շահերի՝ աւելացնում էր երկրի իշխանի ազդեցութիւնը, որովհետեւ նրա ձեռքումն էր զօրքը՝ աջող մրցման միակ գրաւակները։ Զօրքը այն ոյժն էր, որի միջոցով կարելի էր կռւել թէ արտաքին թշնամիների դէմ և թէ ներքին, փնտասկար փարբերի՝ իրար ոչնչացնող և անջատական ոգով պոգորւած հետք ֆէօդալների դէմ։ Իշխանական արքայի լիազօրութեամբ այլ ևս անփոփոխական մի անհրաժեշտութիւն էր։

Ֆէօդալական կարգերի դէմ յամառ ու համերաշխ կռիւ են մշոււմ ժողովրդի բոլոր փարբերը՝ կաթոլիկ եկեղեցին, սպորին, ծնւած դասակարգները՝ վաճառական, զիւղացի, արհեստաւոր և այլն, և վերջապէս երկրի աշխանը։ Սկսում է միարար, ամբողջացնող շարժումը, որը հարւածելով ֆէօդալիզմի իշխանութիւնը առաջնորդում է քաջ առ քաջ դէպի միապետական ուժի մի հաստատումը։ Ոչ ամեն տեղ, ոսկայն։ Անգլիայում, ուր իշխանի ազդեցութիւնը աւելի մեծ էր, քան որևէ ուրիշ տեղ, ժողովրդի սպորին դասերը ձգտելով հանդերձ ազատել ֆէօդալիզմի լծից, զինւում էին միաժամանակ միապետութեան յաւակնութիւնների դէմ, նոյնքան երկիւղ՝ կրելով միապետի բռնակալութիւնից, յորքան և ֆէօդալիւ Յաճախ նոյն իսկ տեսնում ենք անգլիական պատմութեան մէջ, որ արհեստաւորները և զիւղացիք փոխանակ կռւելու աղնականութեան դէմ, միանում են նրա հետ՝ ընդդէմ միապետութեան։ Այդ է պատճառը, որ Անգլիան դեռ վաղուց (13-րդ դարից) սահմանադրական միապետութեան օրինակ տեսնելու և բնական ցամաքին։

Ամենից աւելի ցայտուն կերպով կարարեց միապետութեան զարգացումը Ֆրանսիայում։ Եկեղեցու, իշխանի, վաճառականութեան և սպորին դասերի ներդաշնակ գործակցութեամբ՝ միապետութիւնը իր բացարձակ ձևով ու լիակատար զօրութեամբ չալթանակեց Ֆրանսիական հողի վրայ։ Միահնձան պետը կենտրոնացրեց իր անձի մէջ բոլոր քաղաքական-հասարակական փոփոխութիւնները։ L'Etat c'est moi! Պետութիւնը ես եմ! բացականչում էր Լուդովիկոս XIV աֆն՝ ժամանակ, երբ միապետութեան սկզբունքը իր զարգացման գագաթնակէտին էր հասել։

Այնուհետև Ֆէօդալների շասակարգը, մինչ այն՝ ըմբոստ ու ամբարտաւան թագաւորի նկատմամբ՝ խոնարհուում է նրա առջև, հպարակում է նրան։¹ Այնուհետև ազնականութիւնը բղխում է արդէն թագաւորից և այդպիսով կորցնում է իր վաղեմի բնաւորութիւնը։ Դեռ աւելին. նա դառնում է փոփոսապէս անելորդ... Այնուհետև նա մի բնու է հասարակութեան վրայ։ Միջին դարերում, երբ նա իբր ինքնիշխան պետ՝ իր բարձրաբերձ ու անառիկ շէնքերից հրամայում էր աշխատաւոր մասսաներին, այն ժամանակ նա, այդ Ֆէօդալ-ազնականը իր բացասական պաշտօնի հետ միասին կախարում էր նաև դրական, հանրօգուտ պաշտօն։ Նա ապահովում էր իր հպարակ ազգաբնակչութիւնը հարեան գիշարիներից և ուրիշ անյայտ թշնամիներից։ Այժմ, երբ անցել են այդ արհաւիրաց ժամանակները, երբ կազմակերպւել է նորագոյն պետութիւնը իր զօրքերով, ժանդարմերով, իր բանտերով ու ոստիկանութեամբ, այժմ այլ ևս աշխատաւորը պէտք չունի Ֆէօդալի հովանաւորութեան, այժմ այդ վերջինը արդէն բացարձակապէս ծրլակներ է, պարագիտ։ Եւ իբրև այդպիսին՝ նա դատապարտւած էր վաղ թէ ուշ կործանւելու։ Այդպէս կործանւում է պատմութեան մէջ ամեն շասակարգ, որ քաղաքակրթութեան ընթացքում ապացուցանում է իր անելորդութիւնը փոփոսական ու հասարակական տեսակէտից ¹։ Այդ նոյն վիճակին ենթարկւեց և պատական կղերը իր

¹ Կործանում բառը չըպէտք է հասկանալ բառացի մտքով, à la lettre: Ֆէօդալիզմը, կղերը և այլ բացասական տարրերը իսպառ չեն ջնջւում աշխարհի երեսից, ոչ, Սոցիալական էւոլյուցիան առաջ քշելով հասարակական կենցաղի նոր ու աւելի կատարելագործւած ձևեր՝ չեղ է մշտում հին ձևերը, որոնք չեն կարողանում այլ ևս լարմարել առաջադիմող քաղաքակրթութեան նորանոր պահանջներին։ Սակայն, չեղ մշտելով հանդերձ՝ այդ հնացած ու չեղադէմ ձևերը շարունակում են (արդէն սնանկացած, ի հարկէ) իրենց գոյութիւնը, Գա տիեզերական էւոլյուցիալի հիմնական օրէնքներից մինն է, որ դիտելի է նաև օրգանական (բուսական-կենդանական) զարգացման մէջ, ուր ամենաբարձր, կատարելագործւած մարմինների կողքին տեսնում ենք ամենասոսորին, մանրիկ, հոմոթէն արարածներ։

ՄԱՆ. ԽՄԲ. Նոր դարերի ազնւականութիւնը, կորցնելով միջնադարեան Ֆէօդալի բնաւորութիւնը, դարձաւ միապետականութեան մի արորիբուտ այն մտքով, ինչպէս Մոնտէսքիէօն՝ այդ բանաձևել է. այնպէս որ ազնւականութեան դերը այլ ևս չի կարելի միապետականութեան պատական դերից կատարելապէս բաժանել։

տիեզերական տիրապետութեամբ: Առեւտրն ու արդիւնագործութիւնը զարգանալով կշիռի մէջ ևս բորբոքեց փոշի, հարստութիւն գանձելու տենչանքը, որը գնալով, աւելի և աւելի խորարմատներ ձգեց: Դրա հետ միասին աճեցին կշեռական կեղեքումները, որոնք իրենց գաղթեցնակէտին հասան ինդուլգենցիաների հրապարակական, անամօթ վաճառման ժամանակ: Միւս կողմից՝ հնչուն Դրամի պաշտամունքը սփռւում է կշիռին՝ կամաց-կամաց թողնել հովանաւորի, ապաստանողի վաշեմի Դերը սովալլուկ պրոլետարիատին նկատմամբ. մի պաշտօն, որ նա Դիւրութեամբ տրանձնում էր միջնադարեան ընտանի տնտեսութեան շրջանում, երբ բնութեան բերքերը մեծ առաքութեամբ ամբարում էին եկեղեցական լայնատարած հողերից և վաճառանոց չէին Դուրս բերում: Այժմ, երբ Դրամը ասպարէզ է եկել, երբ կարելի էր ամեն բարիք փխտանակել այդ չաւերժաօդէս թարմ ապրանքի հետ՝ այլ ևս ձեռնդու չէր քրիստոնեայ եկեղեցուն լինել հիւրասէր ու մարդասէր, ապաստան տալ թշուառներին ու անկաշկաներին: Այդպիսով եկեղեցին կորցրեց իր միակ Դրական հասարակական ֆունկցիան, առաջ մշկելով միմիայն բացասականը—կեղեքում՝ ու չափաւորութիւն յանուն կրօնի, Աստուծոյ ու Քրիստոսի: Նրա լուծը աշխարհւոր ընդհանրութեան համար ոչ պակաս ծանր էր, քան ֆէօդալիզմը: Նրա շահարակութիւնները աւելի զգալի եղան գերմանական հողի վրայ, ուր սկսեց մի ուժակցիա եկեղեցու Դէմ, մի հզօր, շառաչալից շարժում, որ վերջացաւ Լուծերի վիթխարի հերձակածովը: Ռէակցիան ալտրեղ ևս չաղթանակեց, անբուժելի հարւած տալով սոսալական ազդեցութեան ու յաւանութեաններին:

(Շարունակելի)